ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ՄԵՐՁԱՎԱՆԻ ԳՅՈՒՂԱԿԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ
2012Թ ԵՐԿՐՈՐԴ ԿԻՍԱՄՅԱԿՈՒՄ ԿԱՏԱՐԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ

- Օրենսդրությամբ սահմանված կարգով, կազմակերպվում է 2013թ. փետրվարի 18-ին կայանալիք ՀՀ նախագահի ընտրությունների նախապատրաստական և կազմակերպչական աշխատանքները.
- Պատշաճ կերպով կազմվել է նախազինակոչային հասակի պատանիների փաստաթղթերը, պատանիները ներկայացվել են Էջմիածնի զինվորական կոմիսարիատ՝ բժշկական հետազոտման, աջակցություն է ցուցաբերվել աշնանային զորակոչին, ճիշտ ժամանակին ապահովվել է զինապարտների մասնակցությունը կազմակերպված զորավարժանքներին.
- Մերձավան համայնքի 2012թ. ,երկրորդ կիսամյակի ֆոնդային բյուջեն կազմում է 41 767 500դրամ, ծախսային մասը կազմել է 30 194 500դրամ.
- Ձեռք է բերվել գյուղապետարանի և մանկապարտեզի հանդիսությունների սրահի համար գույք՝ 1 605 000դրամ արժողությամբ.
- Գյուղապետարանի աշխատողների համար ձեռք է բերվել համակարգչային տեխնիկա՝ 478 300դրամ արժողությամբ.
- Հայաստանի համայնքների միության կողմից կազմակերպված «Գյուղական համայնքների տնտեսական զարգացում» ծրագրի շրջանակներում Գերմանիայի Բավարիա երկրամասի համայնքներում ճանաչողական այցի նպատակներով , համայնքի ղեկավարի գործուղման համար ծախսվել է 1 000 000դրամ գումար.
- «Հայաստան համահայկական» հիմնադրամին է փոխանցվել 50 000դրամ.
- Թերթերի և ամսագրերի բաժանորդագրման համար ծախսվել է 87 200հազար դրամ.
- Համակարգչային ծառայությունների մատուցման համար ծախսվել է 200 000դրամ.
- «Երիտասարդական նախաձեռնությունների կենտրոն» ՀԿ, որպես ֆինանսական աջակցություն, տրամադրվել է 400000դրամ.
- Համայնքի սոցիալապես անապահով 27 ընտանիքների տրամադրվել է դրամական օգնություն՝ 1 610 000դրամ.
- Գյուղապետարանը ամանորի կապակցությամբ գյուղապետարանի, փոստի, մանկապարտեզի, մշակույթի տան աշխատակիցների նվերների գնման համար ծախսել է 200 000դրամ.
- Մանկապարտեզի աշխատանքները կոորդինացնելու, ժամանակին ու անթերի կազմակերպելու համար 2012թ երկրորդ կիսամյակում տրամադրվել է, որպես սուբսիդիա՝ 7 930 000դրամ /ուղղվել է աշխատավարձի, կոմունալ ծառայությունների, սննդի , նորոգումների և սարքավորումների ձեռք բերմանը/.
- Մանկապարտեզի համար գնվել է խոհանոցային սեղան և սեղան-լվացարան ընդամենը՝ 487 200դրամ արժողությամբ, մանկական երկտեղանոց մահճակալներ 12 հատ՝ 960 000 արժողությամբ, մանկապարտեզի խաղասենյակները ձևափոխվել և դարձվել է ննջասենյակներ՝ծախսվել է 4 227 100դրամ.
- Միջնակարգ դպրոցի համար գնվել է դռներ և պատուհաններ՝9 980 000դրամ արժողությամբ, անցկացվել է դպրոցի լոկալ ջեռուցման համակարգ՝ 12 126 175 դրամ արժողությամբ, գնվել է բազալտե սալիկներ՝ դպրոցի պատուհանագոգեր տեղադրելու համար և վճարվել է 330 000 դրամ գումար.
- Քաղաքացիների , ինչպես նաև «Երկրագործության և բույսերի պահպանման» գիտական կենտրոն ՊՈԱԿ աշխատակիցների, դիմումների հիման վրա դարձյալ կատարվել է համայնքի բնակիչների և այգեգործական ընկերության

անդամների հողակտորների չափագրման և սահմանների ճշտման աշխատանքներ.

- 2012թ երկրորդ կիսամյակում գյուղապետարանը բնակիչներից ստացել է 49 դիմումներ, որոնք քննարկվել են և ժամանակին տրվել են պատասխաններ: Գյուղապետարանը բնակիչներին տվել է 312 տեղեկանք, ստացվել է 91 պաշտոնական նամակներ, բոլորն էլ քննարկվել և ժամանակին պատասխանվել են, գումարվել է ավագանու 9 նիստեր, համայնքի ղեկավարի 10 կարգադրություններ և 28 որոշումներ:Կատարվել է 2 աճուրդ և հողի 1 ուղղակի վաճառք.
- Ժամանակին կատարվում է երեխաների բժշկական պրոֆիլակտիկ պատվաստումները, հաշմանդամության կարգ ունեցող բնակիչները և 0-7 տարեկան հիվանդ երեխաները ստանում են իրենց անհրաժեշտ, անվճար դեղորայքը.
- Մերձավան համայնքի ֆուտբոլային թիմը մշտապես մասնակցում է հանրապետական, մարզային առաջնություններին, ֆուտբոլի փնջային մրցաշարերին և բազմիցս արժանացել է պատվոգրերի: Հայաստանի հանրապետական 2012-2013թթ առաջնությունում, Մերձավան համայնքի Մ.Պ 15Բ ֆուտբոլային թիմը, 05.12.2012թ-ի դրությամբ գրավել է առաջին տեղը: Բոլոր միջոցառումների կազմակերպմանը և մասնակիցների տեղափոխմանը աճակցել է գյուղապետարանը.
- Համայնքում գործում է ,,Արեգակ,, վարկավորման ծրագիրը, մասնակիցների թիվը շարունակական ավելանում է, որը համայնքի կին բնակիչներին հնարավորություն է տալիս զարգացնելու իրենց բիզնեսը.
- Շաբաթական երեք անգամ համայնքի ողջ տարածքում կատարվում է աղբահանման աշխատանքներ.
- Հաճախակի փոխվում է փողոցների գիշերային լուսավորության վառված լամպերը և երկրորդ կիսամյակում ծախսվել է 100 000դրամ.
- Երկրորդ կիսամյակում՝ Մերձավան համայնքի խմելու ջրի «Օրվա կարգավորման ջրամբարում» փոխվել է փականային հանգույցները, փոխվել է առաջին փողոցում 50 գծամետր երկարությամբ ջրագիծ, ծախսվել է 80 000 դրամ.
- Համայնքի կոյուղին շատ հին է և հաճախակի նորոգման կարիք է ունենում՝ 2012 թվականի երկրորդ կիսամյակում շուրջ 250 գծամետր կոյուղու խողովակաշար է մաքրվել՝ ծախսվել է 250 000դրամ.
- Գյուղապետարանը, ժամանակին կազմել և ներկայացրել է բոլոր հաշվետվությունները ըստ պատկանելիության.
- Գյուղապետարաի աշխատակազմը մշտապես աջակցում է բնակչության էլեկտրամատակարարման, խմելու ջրի սպասարկման, ոռոգման ջրի մատակարարման, գազամատակարարման, կոյուղու սպասարկման ծառայություններ իրականացնող աշխատակիցներին.

2013թ-ին համայնքի հիմնախնդիրներն են՝

1.Մշակույթի տան տարածքի ցանկապատում.
2.Մշակույթի տան առաջին հարկի մասնակի վերանորոգում:
3.Համայնքի մանկապարտեզի մասնակի նորոգում.
4.Գյուղապետարանի տանիքի նորոգում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Լ. ԳՐԻԳՈՐՅԱՆ